

ԲԱԶԵԼԻ ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՐԱ ԼԵԶՎԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՈՒՇԵՐՈՒՄ

Օ.Ե.Բաբայան, Ա.Է. Հայրապետյան

հայոց լեզվի և նրա դասականության մեթոդիկայի ամբիոն

19-րդ դարի 20-30-ական թվականներին Շուշիում դաստիարակչական, լեզվակրթական որոշակի աշխատանք է կատարում Բազելի միսիոներական ընկերությունը: Սակայն դավանաբանական բնույթի մի շարք հարցեր դժգոհություն են առաջացնում հայ հոգևորականության մեջ, և ցարական կառավարությունը արգելում է նրանց գործունեությունը կտվիատում:

1815թ. Շվեյցարիայի Բազել քաղաքում հիմնադրվում է Բազելի քաղաքությունը: Բազելում են հոգևոր դպրոցներ, որտեղ պատրաստվում են քարոզիչներ: Ուսումնառումն ավարտելուց հետո քարոզիչներն իրենց առարկությունն իրականացնում էին Անգլիայի և Հոլանդիայի Ավետարանական-քարոզչական ընկերություններում: 1820թ. Բազելի քաղաքությունը վերաձևվում է ընկերության: Ուսումնառումն ավարտելուց հետո կարող էին աշխատել նաև ուրիշ նրկներում: Այդ տարիներին ռուսական կայսրության հարավում գտնվող գերմանական գաղութների համար հոգևոր հովիվներ էին փնտրվում: Բազելի միսիան դա ընդունում է որպես կովկասի և Առաջավոր Ասիայի շրջաններում իրենց առարկությունը իրականացնելու կոչ: Դեռ 1815թ.-ից Բազելի միսիան ցանկանում էր ներդրում ունենալ համաշխարհային միախաչման մեջ և դրա իրականացումը տննում էր ոչ քրիստոնեական ժողովուրդների շրջանում տարվող աշխատանքի մեջ: Իրենց կրոնական և ազգային պարտականություններից ելնելով՝ քաղցիցները չէին կարող հրաժարվել գերմանական գաղութներում հոգևոր հովիվ լինելուց, բայց դա կարծես կողմնակի առաջնություն էր դառնում նրանց համար:

1821թ. կովկաս և Առաջավոր Ասիայի են ուղարկվում առաջին միսիոներները: Այդ և հաջորդ տարիներին նշված տարածքներ են գալիս տասնչորս միսիոներներ, որոնց մի մասը ռուսական կառավարության հանձնարարությամբ գաղութներում աշխատում է որպես քահանա:

Ընդհանրապես կովկասում միսիոներական աշխատանքը պետք է տարվեր երեք ուղղությամբ. 1. հոգևոր հովիվություն անել գաղութներում, 2. միսիա թաթարների մեջ, 3. միսիոներական կենտրոն ստեղծել Շուշիում, որը կովկասյան միսիայի կարևոր ճյուղն էր:

1822թ. Բազելի Ավետարանական-քարոզչական ընկերությունը Պետերբուրգում ռուսական կառավարությունից թույլտվություն է ստանում Շուշիում սկսելու քարոզչական գործունեություն: Այս ընկերության ներկայացուցիչները Ավգուստ Դիտրիխի և Ֆելիցիան Զարմաթայի ղեկավարությամբ 1823 թ. ժամանում են Շուշի և այստեղ ծավալում կրթադաստիարակչական և դավանաբանական աշխատանքներ: Շուշիում աշխատող միսիոներների մի մասը աշխատանք է տանում թաթարների շրջանում, մի մասն էլ իրենց նվիրում է հայերին: Միսիոներները աշխատում էին հայերի շրջանում նորարարություններ մտցնել արևմտաեվրոպական շնչով: Վերագալուսում հայերն էլ պետք է միսիոներական աշխատանք կատարեին թաթարների մեջ: Շուշիում բացվում են դպրոցներ հայ նրիտասարդների համար, թարգմանվում է Աստվածաշնչի որոշ մասը, տարածվում են հայոցուրվող գրություններ, որոնք տպագրվում են Շուշիի միսիոներական տպարանում: 1824-25թթ. Ա. Դիտրիխը Բազելում միսիոներական կոմիտեի և հրահանգիչ Բյուսմարտի հետ (նա որոշիչ դեր էր խաղացել կովկասի միսիայի գործում) ճշտում է միսիոներների աշխատանքի ձևը, աշխատավարձի չափը և այլն: Այդ խորհրդակցությունների արդյունք էր Բազելի միսիոներական ընկերության 1825թ. հրահանգը, որը միսիոներների հիմնական օրենքն էր:¹ Սակայն հաջորդ տարիների իրադարձությունները, հատկապես ռուս-պարսկական պատերազմը, համաճարակները, արգելքներ ու խոչընդոտներ են ստեղծում միսիոներական աշխատանքի կազմակերպման համար: Բանի որ քառ օրենքի միայն ուղղափառ եկեղեցին իրավունք ունի միսիոներական գործունեություն ծավալել Ռուսաստանի այլադավան բրիտանականների մեջ, բազելցիների միսիոներական գործունեության իրավական հիմքը կայուն չէր: Այն պայմանավորված էր ռուսական թագավորների անհատական վերաբերմունքով: Երբ 1828թ. Ավերստեր Առաջին կայսրը մահանում է, նոր տիրակալը Նիկոլայ Առաջին կայսրը, գերապետություն է տալիս Բազելի միսիոներական գործունեությանը: Բայց քանի որ նրանք բողոքականներ էին, իրենց գոյատևությանը խանգարում էին ռուսական կայսրության և կրոնական միասնականությանը, որին ձգտում էր Նիկոլայ Առաջինը Ռուսաստանում: Բողոքականները չեն

ընդառնում սրբերի, հրեշտակների, աստվածների, սրբապատկերների պաշտամունքը, քաղաքանք (աթոռիկական գաղափարը: Բողոքականությունը հիմնականում տարբերվում է կաթոլիկությունից և ուղղափառությանից ատժու հետ մարդու անմիջական կապի հարցում: Այդ պատճառով էլ Բազելի միսիոներական ընկերության գործունեությունը, որ սկզբում խանդավառությամբ, խրախուսմամբով էր ընդունվում Ներսես Աշտարակեցու, Եփրեմ Կարթոլիկոսի, ընդհանրապես հայ հոգևորականության կողմից, Հովհաննես Կարբեցու ժամանակ ժգոհության տեղիք է տալիս. ժամանակի ընթացքում բացասալիցությունն նրանց բուն կրոնական ձգտումները: 1832թ. Նիկիայի Առաջին կայսրը արգելում է Բազելի միսիոներական ընկերության աշխատանքը հայերի մեջ, որը, սակայն, իսլամական թաթարների շրջանում կարող էր շարունակվել: Բազելի միսիոներական ընկերությունը սկսում է ինքնաբերական կենսությունը ստեղծելու հնարավորություններ փնտրել իսլամական երկրներում: 1833թ. Թուրքիայում բացվում է դպրոց, որտեղ պարսիկ պատանիները կարող էին սովորել անգլերեն և ֆրանսերեն: Քանի որ հնարավոր չէր միսիոներական աշխատանք կատարել, ոմանք, հատկապես Հաազը, լեզուներ էին դասավանդում: Սակայն Կովկասի գլխավոր կառավարիչ պարոն Ռոզենը 1835թ. հունվարին գրություն է ուղարկում ներքին գործերի նախարարին՝ հայտնելով, որ բազելյան քարոզիչների գործունեությունն այլևս անթույլատրելի է Կովկասում: Հետևում է նախարարների կոմիտեի վճիռը. «ա.վերոյիշեալ ընկերութեան անդամներին և Շուշիում բնակւորուած Բազելեան քարոզիչներին: Բազելի ամեն տեսակ միսիոներական գործողութիւն, թոյլ տալով նրանց այսուհետև պարապել հողագործութեամբ, արդիւնաբերությամբ և արհեստներով: ք.Արզնագի հայ հոգևորականության կողմից գանգատների ոչինչ առիթ չը լինի՝ Բազելեան միսիոներներին արգելել նաև ընդունել Հայ երիտասարդներին իրանց ուսումնաբանները»:

Միսիոներները փորձում էին պատմաբանել, որ հայերի շրջանում աշխատանքը անհրաժեշտ է մահմեդականների և այլալիքների մեջ քարոզչությունը նախապատրաստելու համար: Խնդրեցին թույլատրել զոնն տպարանական գործունեությանը գրադրվել: Բայց իզույ: Նրանք ստիպված եղան ծախելու Շուշիի իրենց ձեռնարկություններն ու գույքերը: Բազելի կոմիտեն որոշում է Արևելքից տեղափոխվել Հնդկաստան: Վերջին միսիոներները տարածքը լքում են 1838 թ.: «Լարաբադի հայ ժողովրդական կրթութեան գործը գլխում էր մի կարևոր գործչից, որ կրօնական կերպարանք ունենալով հանդերձ՝ չէր կարող արհամարհելի մի երևույթ համարել ժողովրդի վրայ բռնապաճ «չատ արտատուելի տգիտութեան» հանդեպ »,- գրում է Լեոն:

Բազելի միսիայի և Կովկասի շփումները տևում են մոտավորապես քսան տարի: Իսկ հայերի հետ նրանց կարգը շարունակվում է մինչև 19-րդ դարի վերջը: Հայերը Բազելի միսիոներական կենտրոնի հրամանով և ծախսերով կրթություն էին ստանում գերմանական հիմնադրված և թողաքականության գաղափարներով դաստիարակված՝ վերադառնում Կովկաս: Ընդհանրապես հայկական համայնքների, հայերի և Բազելի միսիայի հարաբերությունները 19-րդ դարում արժանի են ուսումնասիրության: Այդ մասին անհրաժեշտ տեղեկություններ կան Բազելի միսիայի արխիվներում: Հարավային Ռուսաստանի և Պարսկաստանի արխիվային թանգում 4-րդ հաստությանը տասը հատորներ կան, որոնք ընդգրկում են բոլոր փաստաթղթերը, 1820-39թթ. Բազել ուղարկված նամակները, տարեկան հաշվառությունները: Հատորները կազմված են ըստ տարիների. առաջին վեց հատորները վերաբերում են հայկական միսիային: Միայն 1828թ. Ավգուստ Դիտրիխը, Ֆելիցիան Ջարենբան և Ֆրիդրիխ Հաազը Շուշիից 47 նամակ են ուղարկել Բազել, որոնք պահպանվել են արխիվում:⁵

Բազելի միսիոներական ընկերության կրթական գործունեության մասին ոգևորությամբ է խոսում Լեոն: Նշելով, որ այդ տարիներին կրթությունը մատչելի էր միայն վաճառական դասակարգի մի մասին և հոգևորականությանը, իսկ երկիրը ներկայացնում էր մի «խտար անապատ», որի գետ հնարավոր չէր մաքարել սեփական աննշան միջոցներով, Լեոն հրաշքի նման մի բան է համարում, որ «Լարաբադը այդ իսկ միջոցներին ասպարեզ է դառնում դպրոցական մի ամբողջ նեանդուն շարժման՝ ժամանակի լուսաորության ոգով:

Այս լուսարոր երևույթը, ինչպես, չէր կարող բոլորով տեղական գիտակցությունից, տեղական ոյժերի համախմբումից: Նա օտարաճուտ երևույթ էր, նա եկել էր դրսից, ուներ օտար ծագում, ծառայում էր որոշ նպատակի, բայց այս նպատակը չէր արգելում, որ ժողովրդական մի լա կազմակերպւած գործ ակտի: Անդրկովկասի և յատկապես այդտեղ ապրող հայերի վրայ ուշադրություն էլ դարձում ավան հեռուից»:

Շրջելով Անդրկովկասի տարբեր կողմերում՝ քարոզչական այս խումբը Շուշին ընտրում է իր գործունեության համար ամենահարմար տեղը: 1823 թ. նրանք արդեն Շուշիում տարածք էին

գնել ու ձեռնարկել ուսումնարանի, տպարանի և այլ պետքերի համար շինք շինել. «...ներք քարտիկը կրկնապարկ տուն ամենայն յարմարություններով, շուրջը պարտեզ, ջուր ծաղկագ»:

Բազմի ընկերությունը քարոզիչներին հանձնարարել էր. «1.Տարածել Աստուծոյ խոսքը նոյն կողմերի ազգաց և լեզուաց մէջ, առաջնորդ ունենալով Մեծ Բրիտանիոյ և Այլաւմիդ Աստուածաշնչի ընկերութեան իմաստնաբար յօրինած կանոններն ու հաստատութիւնը 2.Սովորել տեղական նշանաւոր և Աստուծոյ խոսքը տարածելու համար կարելոյ լեզուներից մի քանիսը - արաբերէն, պարսկերէն, թաթարերէն, թուրքերէն և նոր յունարէն: Ձեզանցի պին, ասած է հրաշանգների մէջ, գիտել պատմական լեզուներն և նոր յունարէնի տարբերը, միւսն արաբերէնի և պարսկերէնի սկզբունքը: 3.Հիմնել մի յարմարաւոր տեղ տպարան՝ Ս. գիրքը զանազան լեզուներով տպելու համար. տպելու նաև դասագրքեանք իրանց հիմնած ուսումնարանների համար»:

Ա. Դիտրիխը և Ֆ. Ջարեմբան ընդհանուր քրիստոնեական-միսիոներական նպատակ էին հետապնդում: Նրանք ցանկանում էին քրիստոնյաների մեջ տարածել Սուրբ գիրքը, իսկ կարող էին կրօնափոխ անել միայն հեթանոսներին, մահմեդականներին և հրեաներին: «Բրիտանից եւսոփոր մենք կը իմաննք ուսումնարաններ, ուր կ'աւանդուի Աստուծոյ խոսքը, որ հաւատաբար պէտ ամեն քրիստոնեաներին է: Մենք գիտենք, շարունակուի են. որ մարդ ինչ եկելիցու էլ պատկանելիս լինի՝ կը փրկուի, եթէ սիրտն Աստուծուն նուիրէ...» (Акты Кавк. Арх. Ком. т.VI, стр.469):⁹

Ինչպես նկատում է Լեոն, եվրոպացի կրթված քարոզիչներն էլ չեն կարող գերծ լինել կրօնական նեղ նախապաշարումներից, դառնալ աշխարհաբաղաւազի քրիստոնյա: Դաստիարակչական նպատակով նրանք Շուշիում գնդեցիկ գործ են սկսում, բայց դալխաբաբական նպատակով՝ «ազգեր և պետություններ իրարով պող ու խորտակելու այս ին ուրուականը, պիտի նորից բարձրացնէր իր գլուխը դաստիարակչականը խորտակելու համար»:¹⁰ Բազմի միսիոններն իրենց ծավալած գործունեությունը ոչ քրիստոնյա ազգերի շրջանում իրականացնում էին մասնակիորեն, ուշադրությունը հիմնականում կենտրոնացնում էին հայերի վրա: Դեռ 1823թ. իրենց փաստաթղթերում նրանք գրում են. «Թէպէտ մենք մտադիր ենք սկզբում մի քանի տարի շարունակ առանձին ուշադրութիւն դարձնել Աստուծոյ խոսքը տարածելու միակիս Հայոց մէջ և հաստատելու սոցա համար ուսումնարաններ, այլ սակայն մեր իսկական նպատակն է այն, որ գալուց ժամանակներում առանելապէս մահմեդականներին քարոզենք աշխարհի փրկիչ Բրիտանի ամենաբանը» (Акты Кавк. Арх. Ком. т.VI, стр.469):¹¹

1827թ. Շուշիում բացվում է Բազմի միսիոներական ընկերության ուսումնարանը, որ աշակերտների թիվը մեկ տարւում 30-40-ից հասնում է 130-ի: Փաստորեն դա մի ժողովրդական դպրոց էր: «Մենքուր ցանազան դասակարգերից էին,- գրում էին միսիոնները,- բայց մենք աշխատում էինք, որ չբարոքներ լինին: Նոքա հասակով 10-18 տարեկան էին. մեծ մասամբ Ղարաբաղի Հայք: Սովորում էին հայերէն գրել ու կարդալ. ընթերցում էին Նոր Կտակարան, մատաթը և հինը վարժվում էին թարգմանութեան մէջ՝ զրաբարից աշխարհաբար և իտակարածորէն: Մեզանցի միւսն ուսուցանում էր թուրքաւանութիւն և աշխարհագրութիւն, կազմելով սոցա համար և հայերէն դասագրքեր: Մի ժամանակ աշակերտներից ոմանց ուսուցանում էինք նաև ռուսաց լեզու...»¹²

Մի քանի հայեր նույնպես ուսուցչություն էին անում ուսումնարանում, այդ թվում և Պողոս վարդապետը, բայց նրանց աշխատանքը վերահսկվում էր միսիոններների կողմից:

«Մենք հսկում էինք դասատւութեան մեթոդին, բարոյականութեանը, կարգապահութեանն ու աշխատութեանն: ...Երկու սարկաւազունք սովորում էին մեզանցի մէկի մօտ յունարէն և իբրև սորան օժանդակ լատիններէն. իսկ մէկը սովորում էր անգլիներէն: Սորա էլ օգնում էին իրանց ուսուցչին թարգմանելու Նոր Կտակարանը զրաբարից աշխարհաբար: Սորա միտը ունէին երբայերէն էլ սովորէր,որ Ս. Գիրքը բնագրով կարդան», - գրում են նրանք (Акты Кавк. Арх. Ком. т.VII, стр.308):¹³

Այդ դպրոցը նաև կատարում էր մի այլ շատ կարևոր դեր: Միսիոներական դպրոցն ալարածն երիտասարդներից ոմանք ինքնուրույն կամ էլ միսիոններների օժանդակությամբ Շուշիում և գյուղերում նույնպես բացում էին դպրոցներ: Այդպիսի հինգ դպրոցներ են բացվում (երկուսը՝ Շուշիում, երեքը՝ գյուղերում), որոնցից յուրաքանչյուրում սովորում էր քսան-երեսուն աշակերտ: Փաստորեն կրօնական նպատակ ունեցող եվրոպացի բողոքականները հայ երիտասարդներիս այնպիսի կրթության էին տալիս, որ, կրօնական լինելով հանդերձ, դաստիարակչական մեծ դեր էր կատարում: «Իսկապէս ժողովրդական դաստիարակութեան գործն էր սկսում Ղարաբաղում և այս կողմից Շուշու «լեմսին շլօլը» (գերմանական դպրոցը)

նման էր Թիֆլիսի Ներսիսեան դպրոցին, որի հիմնադիրը դրանից առաջ էր գլխավոր ժողովրդական կրթութեան տեսագին խորհուրդը և բազ էր արել դպրոցը եռասարակութեան բոլոր խաւերի առջև»։

Միսիոներական դպրոցը նաև պատճառ է դառնում, որ ռուսական կաթալարությունը ևս մտածի ժողովրդական կրթության մասին. 1831թ-ից գաղաթական պնտական ռուսական դպրոցներ են բացվում Անդրկովկասի գանազան քաղաքներում, այդ թվում և Շուշիում։

Բազկիցի բողոքական քարազինության մի կարևոր կողմն էլ հրատարակչությունն էր։ Չնայած հրատարակում էին կրոնական-բարոյական բովանդակություն ունեցող թարգմանություններ և ինքնուրույն գրքեր, բայց և այնպես նրանք դառնում են աշխարհաբարի առաջին տարածողները։ Բազկիցի քարազինները, որոնք եկրուպական կրթություն ու դաստիարակություն ստացած մարդիկ էին, լավ էին ըմբռնել խոսակցական լեզվի նշանակությունը կրթության և դաստիարակության հարցում։ Ինչպես վկայում է Հ. Ղուկասյանցը «...այս խմբի ղեկավարն և հոգին էր Ֆնիցիա Ջարեմբան։ Սա ի բնէ Անացի էր և ազնուական տնից, կոմսի տնտոսով. ուսած էր Դորպատու համալսարանում և ստացած վիճիխովայութեան դոկտորի աստիճան, յետոյ դարձած էր քարտուղար սենատի մեջ... Գիտնական պաշարով Ջարեմբայից յետ չէին մնում նորա ընկերակից ընկերներն ևս, որոնցից մինը՝ Դիտրիխ մինչև անգամ Մոսկվայում Սալյանթեան Միք. վարդապետի մոտ սովորել էր հայոց գրաբար լեզուն»։¹⁵ Նրանցից մեկն էլ Հառազը, սովորել էր «Լարաբադի հայ գաւառաբարբառը»։

Տարարներ Շուշիում բացվում է դպրոցի հետ՝ 1827թ.։ Միսիոներական հրատարակությունները լույս էին տեսնում ինչպես Շուշիում, այնպես էլ Մոսկվայում։ Լազարյան ճնմարանի տպարանում։ «Միայն այս տպարանը, ինքնընտնանում, մի գնդեցիկ ներույթ էր Շուշու խաւար իրականության մեջ, որին կարող էր նախանձել նոյնիսկ Էջմիածինը իր անկախար տպարանով։ Միսիոներների տպարանական գործունեութեան արդիւնքներն էին (թէ Շուշում և թէ Մոսկվայում)՝ 11.679 օրինակ հայերէն, 728 օրինակ պարսկերէն, 147օրինակ թուրքերէն և 100 օրինակ ներպարերէն գրքերը... Առաջին հրատարակությունը լույս է տեսնում 1828թ.՝ «Պատմութիւն Սուրբ Գրոց»։¹⁶ Թե՛ Շուշիում 7-8 տարվա ընթացքում հրատարակած, թե՛ նրանց հետնորդների՝ Լազարյան ճնմարանում տպագրած գրքերը աշխարհաբար էին, ժողովրդին հասկանալի լեզվով։ Ակադեմիկոս Գ. Սևակը ուշադրութեան արժանի էր համարում այն հաճախները, որ «19-րդ դարի առաջին քառամյակի կեսերին Շուշում Բազկյան միսիոներներ Դիտրիխը և Ջարեմբան ծննդաբնակիցին միսիոներական գրականության հրատարակությունը այնպիսի աշխարհաբարով, որն իր մարդկութեամբ և պարզութեամբ գերազանց էր այն մինչև 30-ական թվականները, այլ և մինչև 60-ական թվականները հրատարակված բոլոր գրքերի լեզվից»։¹⁷ Գ. Սևակը հետաքրքիր էր համարում այն փաստը, որ Շուշիի «Ավետարանական ժողովրդի տան մեջ» վաճառվող բոլոր գրքերն էլ աշխարհաբար են. «Մեզ հետաքրքրողն այժմ ոչ այլ գրքերի կրոնական բովանդակությունն է, ոչ էլ այն, որ դրանց հրատարակիչներն ու խմբագիրները օտարազգի միսիոներներ էին։ Ամենից ուշագրավն ու մեզ այստեղ հետաքրքրողն այն է, որ այդ գրքերի մեջ արտահայտություն է գտել անցյալ դարի 20-ական թվականներին խոսակցական աշխարհաբար ստանց գրաբարյան սովորող համունուրներին, որպիսիք հետոյ էին ուղղափառ լուսավորչականների լեզվին։ Այս օտարազգիները ժողովրդից սովորեցին կենդանի լեզուն և այդ լեզվով էլ հրատարակեցին իրենց պրոպագանդիստական գրականությունը՝ առանց լեզվախնարարական այս կամ այն նկրտումի»։¹⁸

Լեզվաբան Մ. Լազարյանը նույնպես նշում է, որ «Ժամանակի Արարատյան քարաքի հիման վրա տնակվող լեզվի արանձանակությունները գրաւորվում են նաև թարգմանական գրականության մեջ։ Շուշիում 1832-35 թվականներին լույս են տեսնում աշխարհաբարով գրված մի շարք այնպիսի թարգմանություններ, որոնց լեզուն թավականաչափ մշակված ու եղկված է»։¹⁹

Շուշիում հրատարակվում են նաև հայ քերականների՝ մաթեմիկ լեզվին նվիրված գրքեր, որոնք ներկայացնում են հայերենի ուղղախառնությունը, ուղղագրությունը, քերականությունը։ Այսպես, օրինակ, Պողոս Ներսիսյանց Դարաբաղցի վարդապետի «Համառոտութիւն հայկական քերականութեան» (1829թ.) աշխատությունը, Հովսեփ Արգախեցի վարդապետի «Համառոտ բառգիրք ի գրաբարէ յաշխարհաբարն (ի պէտս համբալաց)» (1830թ.) քառարանը որոշակի դեր են խաղում հայերենի ուսումնասիրության բնագավառում։

Այսպիսով, չնայած որոշակի թերություններին, «Բազելցիների միսիոներական գործունեության հիմքում ընկած էր մայրենի լեզվով կարդալու և գրելու հմտությունների ձևավորման մասնակալարժեքական հիմնադրույթը: Նրանք կովկասի կարևորագույն կենտրոններից մեկում՝ Շուշիում, էսպես նպաստում էին հայ բնակչության կրթամակարդակի բարձրագույնը»⁵¹ իսկ նրանց տալագրած գրքերը փաստական նյութ են ծառայում՝ այդ տասնամյակների աշխարհաբար ուսումնասիրելու համար:

Ամփոփում

Բազելի միսիոներական ընկերության ներկայացուցիչներ 1823թ-ից Շուշիում ծավալել են կրթադաստիարակչական, նաև դավանաբանական գործունեություն: Նախապատրաստական որոշ աշխատանքներից հետո 1827թ. նրանք Շուշիում բացել են ուսումնարան և տպարան: Աշակերտների թիվը մեկ տարում 30-40-ից հասել է 130-ի, որոնք 10-18 տարեկան չբավոր «դարաբաղի հայր» են: Շրջանավարտներից ոմանք նույնպես Շուշիում և գյուղերում բացել են դպրոցներ: Ընդվական առումով հետաքրքիր է, որ տալագրված բոլոր թարգմանական և ինքնուրույն գրքերը աշխարհաբար են. նրանցով կարելի է պատկերացում կազմել այդ շրջանի աշխարհաբարի մասին:

Резюме

Представители Базельского миссионерского общества с 1823 года в Шуши развернули учебно-воспитательную, а также богословскую деятельность. После определенных подготовительных работ в 1827 г. Они в Шуше открыли школу и типографию. Число учеников через год от 30-40 возросло до 130. Это были 10-18-летние бедные «карабахские армяне». Некоторые из выпускников также открыли школы в Шуше и в селах. С языковой позиции интересно, что все напечатанные ими переведенные и самостоятельные книги написаны на новоярмянском языке. И это дает нам возможность составить представление об ашхарабаре этого периода.

Ծանոթագրություններ

1. St'u Fbhrer zum Archiv der Basler Mission, Sbdrußland und Persien (besonders Kaukasus 1820 -1840). CH - 4003 Basel, Schweiz, 1980, էջ 1-38.
2. St'u Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2., Ե., 1976, էջ 515:
3. Հ. Ղուկասնանց, Բողոքականություն կովկասու հայոց մէջ, Թիֆլիս, 1886, էջ 29:
4. Լեօ. Պատմություն Ղարաբաղի հայոց Թմական հոգևոր Դպրոցի (1838-1913), Թիֆլիզ, 1914, էջ 96:
5. St'u Fbhrer zum Archiv der Basler Mission, Sbdrußland und Persien (besonders Kaukasus 1820 -1840). CH - 4003 Basel, Schweiz, 1980, էջ 4.
6. St'u Լեօ, Պատմություն Ղարաբաղի հայոց Թմական հոգևոր Դպրոցի (1838-1913), Թիֆլիզ, 1914, էջ 86-87:
7. Հ. Ղուկասնանց, Բողոքականություն կովկասու հայոց մէջ, Թիֆլիս, 1886, էջ 8:
8. Հ. Ղուկասնանց, Բողոքականություն կովկասու հայոց մէջ, Թիֆլիս, 1886, էջ 4:
9. Հ. Ղուկասնանց, Բողոքականություն կովկասու հայոց մէջ, Թիֆլիս, 1886, էջ 6-7:
10. Լեօ. Պատմություն Ղարաբաղի հայոց Թմական հոգևոր Դպրոցի (1838 -1913), Թիֆլիզ, 1914, էջ 88:
11. Հ. Ղուկասնանց, Բողոքականություն կովկասու հայոց մէջ, Թիֆլիս, 1886, էջ 5-6:
12. Հ. Ղուկասնանց, Բողոքականություն կովկասու հայոց մէջ, Թիֆլիս, 1886, էջ 16-17:
13. Հ. Ղուկասնանց, Բողոքականություն կովկասու հայոց մէջ, Թիֆլիս, 1886, էջ 16-17:
14. Լեօ, Պատմություն Ղարաբաղի հայոց Թմական հոգևոր Դպրոցի (1838 -1913), Թիֆլիզ, 1914, էջ 91:
15. St'u Հ. Ղուկասնանց, Բողոքականություն կովկասու հայոց մէջ, Թիֆլիս, 1886, էջ 3:
16. St'u Լեօ, Պատմություն Ղարաբաղի հայոց Թմական հոգևոր Դպրոցի (1838-1913), Թիֆլիզ, 1914, էջ 93:
17. Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955, էջ 60:
18. Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955, էջ 61:
19. Ս. Ղազարյան. հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 1981, էջ 343:
20. St'u Խ.Ղազարյան (Գ-Դ-Հ), Բազելի միսիոներական ընկերությունը և նրա գործունեությունը Շուշիում, հայ գրքի գյուտի և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակին նվիրված կրթական միջազգային գիտաժողովի թղթեր, Ե., 2005, էջ 173: